

Կ. ՊՈԼՍՈՅ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ՎԱՆԱԿԱՆ-ԴՊՐԵՎԱՆԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ

Տ. Յարութիւն Վրդ. Տամատեան

Փրոֆ. Ռոպէրթա Էրվինի, Դոկտ. Ճեսի Արլէնի եւ Արթիւր Իբէքի հետ

Ուրբաթ, 17 փետրուար 2023, երեկոյեան ժամը՝ 7:30ին
Անձամբ եւ Զումով, Սրբոց Ղեւոնդեանց Հայոց Եկեղեցի
St. Leon Armenian Church

12-61 Saddle River Rd, Fair Lawn, NJ 07410

Հաճեցէք արձանագրուիլ՝ <https://bit.ly/Saint-Leon-Monastic-Life-Bolis>
Եւ յարուստի վրայ դիտելու համար, ծրագրին սկիզբը այցելել՝ <https://bit.ly/StLeonEvents>

Կազմակերպութեամբ՝


Գրիգոր եւ Գլարա Զօհրապ Տեղեկատուութեան Կեդրոն եւ Ս. Ղեւոնդեանց Հայոց Եկեղեցի

Համագործակցութեամբ՝

Առաջնորդարանի Կոմիտաս Երգչախումբ, Դպրեվանք Սանուց Միութիւն, Էսաեան-Կեդրոնական Սանուց Միութիւն, Պոլսահայ Օգնութեան Միութիւն, եւ Ս. Ներսէս Ընծայարան



Հայ Եկեղեցւոյ նուիրապետական Աթոռները իրենց խնամքին յանձնուած ժողովուրդին ծառայելու կամակար եկեղեցականներ պաստրաստելու տրամադրութեամբ հիմքը դրած են վանական եւ կամ դպրեվանական կառոյցներուն: Կ. Պոլսոյ Պատրիարքութիւնը եւս անցեալին իր ծոցին մէջ ունեցած է նման կառոյցներ, որոնց մէջ ամենէն նշանաւորը, յատկապէս 19րդ դարուն, եղած է Արմաշու Վանքը: Այս դասախօսութիւնը պիտի ներկայացնէ Կ. Պոլսոյ Հայ Առաքելական Վանական-Դպրեվանական կեանքը իր կառոյցներով եւ իրենց գործունէութեամբ, յատկապէս 20րդ դարու պայմաններուն մէջ: Այս ուղղութեամբ Պալաթու Ընծայարանի, Գալֆայեան Ուխտի Միաբանութեան, Սկիւտարի Ս. Խաչ Դպրեվանքի եւ Իշխանաց Կղզեաց Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ գործունէութեանց մասին անդրադարձ պիտի կատարուի: Պիտի ներկայացուի նաեւ, թէ՛ սոյն հաստատութիւններէ սնած միաբաններ ու միաբանուհիներ, որոնք ճանաչում գտած են Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մօտ:



Տ. Յարութիւն Վրդ. Տամատեան ծնած է 14 Սեպտեմբեր 1988ին, Ստանպուլ: 2015ին, ձեռնադրուած է կուսակրօն եկեղեցական: Յետ ձեռնադրութեան, նշանակուած է Ս. Թագաւոր Եկեղեցւոյ Քարոզիչ, ինչպէս նաեւ Իշխանաց Կղզեաց Հոգեւոր Հովի: Հեղինակն է երեք գիրքերու եւ զանազան քարոզիսօսական ու կրօնական յօդուածներ: 2021ի նոյեմբերին ուղղուած է Մայր Աթոռ Ս. Էջմիածին, ուր պաշտպանած է՝ «Կ. Պոլսոյ Պատրիարքութեան վանական/դպրեվանական կեանքը» խորագրեալ ասարտաճառը եւ ասպ Օշականի մէջ, ստացած է վարդապետական գաւազանի մասնաւոր իշխանութիւն: 2022ի Սեպտեմբերին ժամանակաւորապէս ուղղուած է ԱՄՆ-ի Արեւելեան Թեմը, ուր իր գիտելիքները զարգացնելու համար կեցութիւն հաստատած է Ս. Ներսէս Ընծայարանէն ներս:

